ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբեր 2022 թվականի թիվ 323 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՏԵՍԱԿԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 105-րդ կետով.

որոշում եմ.

1. Սահմանել ՀՀ Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2023-2025 թվականների ռազմավարական և 2023 թվականի տարեկան ծրագրերը կազմելու գործընթացում կիրառվող չափորոշիչների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

15.11.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

14 նոյեմբեր 2022թ.
ք. Իջևան

Հավելված 1

ՀՀ Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2023-2025 թվականների ռազմավարական և 2023 թվականի տարեկան ծրագրերը կազմելու նպատակով ռիսկերի վերլուծության գործընթացում կիրառվող չափորոշիչների ցանկը

N	Չափորոշչի տեսակը	Տեսակը	Չափորոշչի նկարագրությունը
1	Նշանակալիություն	Ընտրանքային	Գործակցի սահմանման համար հիմք է հանդիսացել ներքին աուդիտի աշխատանքային խմբի կողմից իրականացված վերլուծությունները և ուսումնասիրությունները
2	Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ	Պարտադիր	Ներքին աուդիտի ծառայությունը նախորդ տարվա ընտրանքի արդյունքների հետ կապված գործակիցը սահմանվում է 1) 0.5- եթե միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում, 2) 1-եթե միավորը ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում սակայն չի ընդգրկվել նախորդ տարում, 3) 1.5-եթե միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում
3	Փոփոխությունների մակարդակ-ՆԱ աշխատանքային խմբի կողմից նախնական գնահատումներ	Ընտրանքային	Գործակիցը սահմանվում է յուրաքանչյուր ստորա բաժանման/աուդիտի միավորի գործառույթները կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում՝ հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքները և մնացորդային ռիսկերը
4	Հայտնաբերված թերացումներ	Ընտրանքային	Գործակցի սահմանման համար հիմք են հանդիսանում 2020-2021 թթ. ընթացքում տվյալ ստորաբաժանման/գործառույթի աուդիտի (այլ ստուգող, հաշվեքննություն իրականացնող մարմինների կողմից կատարված աշխատանքների արդյունքներով) իրականացման արդյունքներով արձանագրված թերացումների/անհամապատասխանությունների կարևորության աստիճանը (հիմնական, ոչ հիմնական, միջին, ցածր)
5	Ղեկավարի համար՝ առաջնահերթություն (Ստացված արձագանք)	Ընտրանքային	Գործակցի սահմանման համար հիմք են հանդիսացել ՀՀ Տավուշի մարզպետի հետ հանդիպման /քննարկման արդյունքում վերջինիս կողմից նախանշված թիրախները

Գլխավոր քարտուղար Ա. Գևորգյան